ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 4-ից 8-ը Կիպրոսի Հանրապետություն (Նիկոսիա) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանուն**

   Վահրամ Դումանյան

2. **Զբաղեցրած պաշտոն**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. **Գործուղման վայրը/ժամկետները**

   Կիպրոսի Հանրապետություն, քաղաք՝ Նիկոսիա, հոկտեմբերի 4-ից 8-ը:

4. **Հրավիրող կողմը**

   ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը**

   2022 թվականի հոկտեմբերի 4-ից 8-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի 9-րդ նախարարական համաժողովին մասնակցելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները**

   Համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- «Կրթություն հանուն կայուն զարգացման» եզրույթի ինտեգրումը երկրի քաղաքականության համատեքստում,
- Թվային կրթությունը որպես «Կրթություն հանուն կայուն զարգացման» ծրագրին աջակցող գործիք,

- Խոչընդոտներ, որոնց հանդիպում են երկրները «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարությունն իրականացնելիս,
- Մարտահրավերներ՝ կապված ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ռազմավարության իրականացման նոր շրջանակի հետ,
- Շրջակա միջավայրը համաեվրոպական տարածաշրջանում. տեսլականները 2030 թվականին և դրանից հետո,
- Որակյալ կրթություն և կրթություն հանուն կայուն զարգացման,
- «Կրթություն հանուն կայուն զարգացման» ծրագրում երիտասարդության ներգրավվածության բարձրացումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը զեկույցով հանդես է եկել թեմատիկ նիստում, ինչպես նաև հանդիպումներ է ունեցել գործընկեր նախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Իր ելույթում ՀՀ ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է համաշխարհային կրթական ճգնաժամին, որն ընդգրկում է կրթության հասանելիության, ներառման, որակի և մատչելիության հետ կապված խնդիրները, բացասական հետևանքներ ունի ողջ աշխարհի երեխաների և երիտասարդների ապագայի վրա և դանդաղեցնում է կրթությանն առնչվող Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացը, ինչպիսիք են Covid-19 համաճարակը և ռազմական հակամարտությունները: ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի հանդեպ հրահրված լայնածավալ ռազմական ագրեսիայի հետևանքով կրթության ոլորտում առկա խնդիրները, մասնավորեցնելով, որ ագրեսիայի հետևանքով Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի 172 դպրոցներում սովորող 24873 դպրոցական և 69 մանկապարտեզների 5808 նախադպրոցական տարիքի երեխաներ զրկվել են կրթության իրավունքից, իսկ Սոթքի և Այրքի դպրոցները վնասվել են: Նախարարը կոչ է արել միջազգային հանրությանը դատապարտել Ադրբեջանի նմանօրինակ թշնամական գործողությունները՝ այդպիսով նպաստելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի մանդատի հիմնարար սկզբունքների հետագա խախտումների կանխարգելմանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարն հաստատել է, որ Հայաստանի Հանրապետությունը մեծապես կարևորում է այս համաժողովի արդյունքում ձևավորված օրակարգը և հանձնառու է կրթության փոխակերպման գլոբալ միտումներին ընդառաջ կատարել լայնածավալ կրթական բարեփոխումներ՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին լիովին հասնելու համար: Այս

համատեքստում Նախարարը ներկայացրել է «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը»: Մանրամասնելով նրա բովանդակությունը շեշտադրվել է, որ այն հիմնված է ՄԱԿ-ի 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգի վրա, մասնավորապես՝ աղքատության վերացում, գենդերային հավասարություն, որակյալ կրթության հասանելիություն, արժանապատիվ աշխատանք բոլորի համար, ինչպես նաև մոտեցումներ՝ հիմնված մարդու իրավունքների, խտրականության դեմ պայքարի և «ոչ ոքի չանտեսելու» սկզբունքի վրա:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը մասնակցել է համաժողովի շրջանակում կազմակերպված կլոր սեղան քննարկումներին:

Հանդիպումներ են եղել նաև Վրաստանի, Սերբիայի և Կիպրոսի կրթության ոլորտի պատասխանատուների, ինչպես նաև Կիպրոսի Հանրապետության խորհրդարանի նախագահի հետ: Կիպրոսի կրթության նախարարի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնելու համատեղ փորձի փոխանակման ծրագրեր, ինչպես նաև համագործակցել կրթության թվայնացման, կանաչ տնտեսության, ԳՏՃՄ (STEM) առարկաների և կրթության հասանելիության շրջանակներում: Հայկական կողմի առաջարկության հիման վրա պայմանավորվածություն է ձեռք բերվել կնքելու վերոնշյալ համագործակցությունը հաստատող Հուշագիր:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

ՀՀ ԿԳՄՍ նախարար	**Վահրամ Դումանյան**
ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ	**Արթուր Մարտիրոսյան**
ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական	**Արման Անդրիկյան**

12.10.2022թ.